№ 27 ՇԱԲԱԹ ՄԱՐՏԻ 7 **1892** ՇԱԲԱԹ ՄԱՐՏԻ 7 № 27

ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատանը մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՆԵՐԿԱՅ 1892 ԹԻԱԿԱՆԻՆ

20-ՐԴ ՏԱՐԻ **„ՄՇԱԿ“** 20-ՐԴ ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով: Մենք ստանում ենք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ռ., ինն և ութ ամսվանը՝ 8 ռ., եօթ ամսվանը՝ 7 ռ., վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը՝ 2 ռ., մի ամսվանը՝ 1 ռուբլի:

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆը (Բարօնական և Բաղարնայա փողոցների անկիւնում, Թամամշեվի տանը).

Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար պէտք է դիմել հեռևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal armenien «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով. բաւին վճարվում է 2 կոպէկ.

«Մշակի» առաջին երեսի վրա մասնաւոր յայտարարութիւններ չեն տպագրվում, այլ տպագրվում են միմիայն՝ լրագիրների յայտարարութիւնները, մահացուցակները և պաշտօնական հաստատութիւնների յայտարարութիւնները, որոնց համար կրկնակի է վճարվում: Մահացուցակի տպագրել առաջին երեսի վրա արժէ 4 ռուբլի, իսկ չորրորդ երեսի վրա՝ 2 ռուբլի:

(№ 127) Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԹԵՄԻՍ ՍՐԲԱԶԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԻ պատուիրանի համաձայն սրանով յայտնում ենք քաղաքիս և գաւառական ընտրված բոլոր ծխական պատգամաւորներին, ամսիս 8-ին, 11 ժամին դալ և ներկայ լինել Վանաց մայր եկեղեցում ս. պատարագին, ապա առաջնորդարանում մասնակցել Թեմական պատգամաւորի ընտրութեանը, որը գնալու է ս. Էջմիածին ամենայն հայոց կաթողիկոսի ընտրութեան համար: Այս մասին իւրաքանչիւր պատգամաւոր կը ստանայ և առանձին հրաւիրագիր:

Վերատեսուչք բարեկարգութեանց Թիֆլիսի եկեղեցիների՝ Յովհաննէս քահանայ Մարտիրոսեանց և Հաւաքարի՝ Աշոտ քահանայ Թէմուրազեանց: 2—2

Կատարվելիք Աւետիսեան, Գրիգոր և Մնացական Եպօրովիչ Փրիդոնօվների, յայտնում են ազգականներին և ծանօթներին, որ **ԵՊՕՐ ԳՐԻԳՈՐԵԱՆ ՓՐԻԴՈՆՕՎԻ** մահվան քառասունքին, մարտի 8-ին, Նորաշէնի եկեղեցում հոգեհանգիստ կը կատարվի: Պատարագը կը սկսվի $10^1/_2$ ժամին առաւօտեան, իսկ հոգեհանգիստը՝ 12 ժամին: 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջ և այժմ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատասխան Գաբրիէլ Սունդուկեանցին. Խոստմունք և դաշն. Շուշու Թեմական պատգամաւորի ընտրութեան հարցը. Նամակ Օղէասյից. Նամակ Ախալքալաքից. Նամակ Խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիւրքիայից. Նամակ Պարսկաստանից.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՏԵՂԵԿԱՑՈՒՑ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գիտական տօնախմբութիւն.

ԱՌԱՋ ԵՒ ԱՅԺՄ

—

„Արձագանքի“ խմբագիր պ. Աբգար Յովհաննիսեան դնում է վերջապէս իր քուէտուփը, որպէս Թեմական պատգամաւոր: Հասարակութեան վրա տպաւորութիւն գործելու համար պարոնը յիշեցնում է իր անցեալը, յիշեցնում է որ հանգուցեալ Ներսէս Վարժապետեանի կուսակից էր, շեշտելով այն իրողութեան վրա, որ Ներսէսը Բերլինի դաշնագրի 61-երդ յօդուածի հեղինակն էր, յիշեցնում է իր ընթերցողներին որ Մակար կաթողիկոսի ընտրութեան ժամանակ ինքն բացասական քուէ տուեց նրան և այլն:

Այդ բոլորը շատ լաւ է: Բայց ինչով է վերջացնում նա իր յօդուածը. դրանով որ Մկրտիչ Խրիմեանի անունը դնելուց յետոյ, նրա հետ միասին դնում է և Խրիմեանի երկու ամենաթունդ հակառակորդներին՝ Աշըղեան Խորէնին և Իզմիրլեան Մատթէոսին և իր խօսքն աւարտում է իր, այժմեան հակառակորդների դէմ յարձակմունքներով....

Սակայն ո՞վքեր են Աբգար Յովհաննիսեանցի այժմեան հակառակորդները. դրանք այն մարդիկն են, որոնց կուսակցութեանը նա մի ժամանակ պատկանում էր: Երբ 1884 թուին ընտրվում էր Թիֆլիսի Թեմական պատգամաւոր, „Մշակի“ խմբագիրը նիւթական զործերի խառն ղրութեան և անձնական հիւանդութեան պատճառով չը կարողանալով ընդունել պատգամաւորի պաշտօնը, բացարձակապէս մատնացոյց արեց ժողովականներին Աբգար Յովհաննիսեանցի վրա, քանի որ սա էլ իր „Արձագանքում“ պաշտպանում էր այն ժամանակ Ներսէս Վարժապետեանի Թեկնածութիւնը և պատկանում էր ուրեմն ազատամիտ և առաջադէմ կուսակցութեանը....

Մենք ճանաչինք հաւատարիմ նոյն ուղղութեանը, իսկ Աբգար Յովհաննիսեան վաղուց արդէն անցաւ յետադէմ կուսակցութեանը: Այժմ նա մեզ հակառակորդ է համարում և իրաւունք ունի, քանի որ այն մարդը, որը մի ժամանակ Ներսէսի պաշտող էր կամ գուցէ ձևացնում էր իրան պաշտող, այժմ ուզում է տեսնել Էջմիածնի կաթողիկոսական գահի վրա Ներսէսի ամենաթունդ հակառակորդներին, իսկ Ներսէսի ու Խրիմեանի ամենամեծ պաշտողին ու հետևողին, Արիստակէս Սեդրակեանին երբէք չի ուզենայ տեսնել նոյն գահի վրա:

Եւ զուր էք Խրիմեանի անունը տալիս. դա երևի ձևի համար էք անում, ինչպէս նոյնն անում է և ձեր կուսակից Գաբրիէլ Սունդուկեանց, ձևի համար, որովհետև Խրիմեան այն աստիճան մեծ մարդ է, որ նրան չը յիշել չէք կարող... Սակայն նրա բազմելը գահի վրա ձեր կուսակցութեանը ամենևին ձեռնտու չէ, քանի որ Խրիմեանի ամենամօտ օգնականը կը դառնայ անպատճառ այն ազնիւ, շիտակ և երկաթէ կամք ունեցող մարդը, որը կրում է Արիստակէս Սեդրակեան անունը:

Այ՛ո, պ. Յովհաննիսեան, դուք մի ժամանակ մեր կուսակցութեան էիք պատկանում՝ առաջադէմ և ազատամիտ կուսակցութեանը: Բայց այդ ժամանակները վաղուց անցել են. մենք մինչև օրս էլ հաւատարիմ մնացինք նոյն ուղղութեանը, իսկ դուք մեզ այժմ, կատարեալ իրաւունքով ձեր հակառակորդ էք համարում:

Սակայն բօպէական տպաւորութիւնից օգտվելու համար դուք ձեռնտու էք համարում ընտրողներին յիշեցնելու, որ դուք էլ մի ժամանակ առաջադէմներից էիք... Դուք ինքներդ, ի հարկէ, անկարող կը լինէք ձեր վարմունքին պատշաճաւոր անուն տալ, ուստի մենք կը բացատրենք ձեր վարմունքը. դուք յիշեցնելով ձեր սէրը դէպի Ներսէսը, և յիշեցնելով ձեր անցեալը, որը կատարելապէս հակառակում է ձեր ներկային, կամենում էք ծածկել ձեզ մեծ մարդու, Խրիմեանի և միւս մեծ մարդու, Ներսէսի փայլով, որպէս զի նրանց կուսակիցների մի քանիսներից որսաք մի քանի քուէներ, իսկ այդ ստացած քուէները՝ տաք նրանց ուղղութեան հակառակորդներին՝ Աշըղեանին և Իզմիրլեանցին:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԱՍԽԱՆ ԳԱԲՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻՆ

—

Դուք, պ. Սունդուկեանց, գրել էք պատասխան «Մշակում» բաւական քաղաքավարի կերպով, բայց «Новое Обозрѣніе» լրագրում փոքր ինչ չեղվում էք ընդունված կանոններից:

Սակայն ձեր բոլոր ասածները թէ իմ լրագրում և թէ յիշված ռուս թերթում կատարելապէս անհիմն են: Նախ դուք ընտրվել էք Մոզնու եկեղեցում մեր կուսակցութեան ձայներով. ձեզ առաջարկված է եղել ընդունել պատգամաւորութիւնը Մոզնու եկեղեցում ուղղակի իմ կողմից,—և դուք ընդունեցիք: Եւ ինչպէս ընդունեցիք: Ահա ինչպէս. առաջարկութիւնն ընդունելու ժամանակ մի խօսք էլ չասեցիք թէ Արիստակէս Սեդրակեանի թեկնածութեան դէմ էք: Եթէ դուք այդ ասէիք, մենք ձեզ չէինք մոցնի մեր ցուցակի մէջ և Մոզնու եկեղեցում անպատճառ կը սևացնէինք ձեզ, որովհետև անազին թիւով ձայներ ունէինք այդ եկեղեցու ծխականների մէջ: Իսկ եթէ Աբգար Յովհաննիսեանցին չը կարողացանք սևացնել, այդ այն պատճառով էր, որ մեր կուսակցութեան ձայների հաշուի մէջ մեր երրորդ թեկնածուի վերաբերմամբ մի անակնկալ թիւրիմացութիւն և սխալ պատահեց, որը գուցէ ժամանակով կը բացատրենք:

Վերջապէս ձեզ և ամենքին յայտնի է, որ վերջին ընտրութիւնների ժամանակ համարեա չը կային չէզոք ձայներ: Բոլոր ձայները երկու կուսակցութեան էին բաժանված և ընտրված լինելու համար պէտք էր անպատճառ լինել այս կամ այն կուսակցութեան ցուցակում: Իսկ դուք միայն մեր ցուցակումն էիք, ուրեմն ընտրվել էք մեր ձեռքով:

Ուրեմն պէտք էր, պ. Սունդուկեանց, որ մեր առաջարկութիւնը մեր ուղարկած մարդու ձեռքից ընդունելու ժամանակ արդէն յայտնէիք թէ մեր թեկնածուներից մէկի՝ Արիստակէսի դէմ էք: Նախ ընդունում էք մեր առաջարկութիւնն ուրախութեամբ, ուրեմն մեզ կարծել էք տալիս, թէ ընդունում էք ամբողջովին և մեր պրոգրամը, այսինքն Խրիմեանի և Սեդրակեանի թեկնածութիւնը, և ապա երբ մեր ձեռքով ընտրվեցաք,—այն ժամանակ յայտնում էք, որ Խրիմեանի կողմն էք միայն, և Արիստակէսի դէմ....

Դուք ասում էք որ մենք շատ ֆամիլիար (մտերմարար) անուանում ենք հայրիկին՝ Մկրտիչ Խրիմեան, կամ ուղղակի Խրիմեան և ոչ թէ «նորին բարձր սրբազնութիւն Մկրտիչ արքեպիսկոպոս Խրիմեան:» Խնայեք, ձերդ գերազանցութիւն, (չենք կամենում ձեզ հետ մտերիմ լինել) որ այդքան մեծ մարդուն, ինչպէս Խրիմեանն է, բաւական է միմիայն Խրիմեան անուանել, նոյն իսկ առանց անուան: Դուք միթէ չը գիտէք, որ շատ նշանաւոր մարդկանց բաւական է ասել՝ Կոլումբոս, Գամբետտա, Պուշկին, Ալիշան, Ներսէս, Խորենացի, Մեսրոպ, Շչեդրին, Նաղարեանց, Նալբանդեանց, Վարժապետեան, Գարիբալդի....

Դրանով միայն միամիտներին կարելի է մոլորեցնել. սակայն ուժն էք դնում Խրիմեանի կողքին: Դուք շատ լաւ գիտէք օրէնքները. գիտէք որ մի Խրիմեանով չէ կարելի բաւականանալ, այլ թագաւոր Կայսրին երկու մարդ պէտք է ներկայացնել, որպէս զի Նորին Մեծութիւնը նրանցից մինին բարեհաճէ հաստատել:

Դուք մեզ զարմացնելու համար անդադար կրկնում էք Խրիմեան... իսկ ձեր երկրորդ թեկնածուն ով է... դուք աղաղակում էք «Մկրտիչ արքեպիսկոպոս Խրիմեան», կամ «ես անպայման Խրիմեանական եմ» և այժմ կրկնում էք միայն թէ Արիստակէսի դէմ էք, որպէս զի, ձեր կուսակից Աբգար Յովհաննիսեանի պէս վերջը Խրիմեանի կողքին մի կերպ անցկացնէք նրա ուղղութեան հակառակորդներից մինին՝ Իզմիրլեանին կամ Աշըղեանին... Այդպէս չէ, ձերդ գերազանցութիւն:

Գ. Արծրունի

ԽՈՍՏՄՈՒՆՔ ԵՒ ԴԱՇՆ

—

«Ցարազ» շաբաթաթերթում տպված է հետևեալ յօդուածը:

Երբ մէկին մի բան ենք խոստանում, նա իրաւունք ունի ակնկալել մեր խոստման կատարմանը:

Ազնուութեան օրէնքը պահանջում է, որ խոստանալիս մեր դիտաւորութիւնը պարզ, մեկին և որոշ կերպով յայտնենք նորան, ում որ խոստանում ենք: Խոստացողը, եթէ ազնիւ է, աշխատում է կատարել իր խոստումն այնպէս, ինչպէս որ համոզված է թէ խոստումն ընդունողը հասկացաւ:

Մեր կարողութիւնից վեր խոստմունքներ չը պիտի անենք. որովհետև այդպիսի խոստումները չը կարողանալով կատարել՝ կը լինենք խաբեբայ և ստախօս: Ստիպմամբ արած խոստումը պարտաւոր չենք կատարելու, բայց եթէ կամաւ արած խոստումն չը կատարենք՝ պարտաւոր ենք խոստումն ընդունողի կրած վնասը հատուցանել:

Ազնիւ և պատուաճանաչ մարդիկ առանց լաւ կշռադատելու խոստմունք չեն անում: Զգոյշ կերպով խոստմունք անողները՝ շատ ճիշդ են՝ ընդհանրապէս իրանց խոստմունքը կատարելու:

Մեզանում ամենից շատ իրանց խոստումն ու դաշինքը չեն կատարում ճշդութեամբ արհեստաւորները, հրատարակիչները, հրապարակախօսները, խմբագիրները, թատերավարները, փաստաբանները և սպասաւորները:

Եթէ ճիշդ քննենք՝ ամէն տեղ կը գտնենք պարտազանցութիւն. բերենք մի քանի օրինակներ:

Մէկին ընտրվելու է հոգաբարձու. սա իր ընտրողներին խոստացել կամ ուխտել է դպրոցի կանոնագրութեան և պիտոյից համեմատ նուիրել իր ժամանակի որոշ մասը հասարակաց գործին: Բայց չէ ծառայում դպրոցին ոչ կանոնագրութեան համաձայն և ոչ առօրեայ պիտոյից համեմատ. սա ինչ է.—պարտազանցութիւն:

Մենք ճանաչում ենք հոգաբարձուներ, որոնք դպրոցի մէջ ընդունված կանոնի և սովորոյթի համաձայն՝ պարտաւոր են շաբաթը մի անգամ ներկայ լինել հոգաբարձական ժողովներին, բայց ամիսներով ներկայ չեն լինում և ոչ էլ պաշտօնից հեռանում են. այս կերպ պաշտօնավարութիւնը խաբեբայութիւն է:

Մէկը ցանկանում էր երեցփոխ լինել մի եկե-

ղեցու, և եղաւ. ժողովուրդն ընտրեց նրան որոշ ժամանակով և յանձնեց նրան եկեղեցու նիւթական մասի հոգատարութիւնը: Այդ պաշտօնը ձեռք բերելուց յետոյ՝ նա իր ստանձնած պաշտօնը չէ վարում, այլ յանձնում է ժամհարին, տիրացուին կամ մի պատահական անձի. եկեղեցին զրկւում է իր նիւթական հասոյթներից. նրա մաքրութեան և նորոգութեան մասին հոգատարութիւն չի լինում. ժողովրդին հաշիւ ու համար չի տրւում ստանձնեալ կարգով. ծառայութեան ժամանակը վաղուց անցել է, բայց այդ երեցփոխը չի թողում իր պաշտօնը. ժողովուրդը պահանջում է որ հաշիւ տայ և հեռանայ, բայց նա ոչ հաշիւ է տալիս ժողովրդին և ոչ հեռանում է պաշտօնից՝ ապօրինի միջոցներ գործ դնելով, յարատևում է իր պաշտօնի մէջ՝ հակառակ կարգի ու կանոնի, հակառակ սովորութեան և առանդութեան. այսպիսի երեցփոխին ինչ անուն տանք.—սա խարեբայ է, ստախօս է, պարտաղանց է, սեղանակապուտ է, ուխտաղրուժ և իրաւանց յափշտակող է, որին պէտք է բարոյական տեսակէտով համարել գող և աւազակ, որ պետական օրէնքի միջոցով պէտք է արտաքսւի Աստուծոյ տաճարից և ենթարկւի դատապարտութեան. որովհետև այլ ևս բարոյական օրէնքից չի ամաչում և երկչում:

Ս. Ք. Բէդ-Նաղարեանց

ՇՈՒՇՈՒ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

«Մշակի» 21-րդ համարում հաղորդված է, որ փետրվարի 14-ին այստեղ պիտի կայանար Թեմական պատգամաւորի ընտրութիւնը, բայց ընտրութիւնը չը կայացաւ հետևեալ պատճառներով: Եկեղեցական պատգամաւորներից ոմանք բողոքում էին այն բանի դէմ, որ Նուխու վիճակը իր 12 ձայները յանձնել է մի պարոնին, որ նա ներկայացուցիչ լինի Թեմական պատգամաւորի ընտրութեան ժամանակ Նուխու վիճակի կողմից: Բայց Թեմիս առաջնորդը պնդում էր, թէ պարոնը կարող է ներկայացուցիչ լինել Նուխու վիճակից, որը 12 ձայն ունի: Առաջնորդը նոյնպէս ասեց, թէ չէ կարելի դրսից Թեմական պատգամաւոր ընտրել, այլ պէտք է անպատճառ Շուշուց ընտրել: Վճռեցին այդ երկու հարցը հարցնել ս. սինոդից:

Սինոդը փետրվարի 24-ին հեռագրեց այդ մասին, թէ եկեղեցական մի պատգամաւորը երկու ձայնից աւելի չէ կարող ունենալ, հետևաբար մի մարդ չէ կարող 12 ձայն ունենալ: Թեմական պատգամաւոր կարելի է ընտրել և դրսից, որտեղից որ կամենան ընտրողները:—Մենք այստեղ մի նկատողութիւն պիտի անենք. ս. սինոդի բացատրութեան համաձայն՝ Նուխու վիճակը կարող է ուղարկել կամ այստեղ նշանակել 12 պատգամաւորի տեղ ամենաքիչը 6 պատգամաւոր: Նուխու վիճակի պատգամաւորները շատ լաւ կանեն, եթէ իրանք ուղղակի ներկայ գտնվեն ընտրութեանը: Բայց, ինչպէս երևում է, նրանք իրանց ձայները յանձնելու են այստեղ սրանց-նրանց: Այս դէպքում Նուխու պատգամաւորները թող լաւ իմանան, թէ ում են տալու իրանց ձայները և այնպիսի մարդկանց թող տան, որոնք իրանց ուղղութեան մարդիկ են և որոնց լաւ ճանաչում են:—Որքան լսում ենք (յայտարարութիւն տպագրելու սովորութիւն չը կայ մեր մէջ), Թեմական պատգամաւորի ընտրութիւնը կը կայանայ 15-ին:

***

ՆԱՄԱԿ ՕԴԷՍԱՅԻՑ

Փետրվարի 23-ին

Այսօր, ժամը 4-ին, տեղիս հայոց եկեղեցում նշանակված էր ծխական պատգամաւորների ընտրութիւնը: Ներկայ էին այստեղ ապրող կովկասցիներ, և բնիկ ժողովրդից մի քանի մարդիկ, ընդամենը մօտ 40 հոգի:

Նախ և առաջ պէտք է ասել, որ այստեղ հայերը մօտ 200 ընտանիքներ են, հետևապէս եթէ բոլոր ծխականները հրաւիրված լինէին և գային, ընտրութեանը մասնակցողների թիւը շատ մեծ պիտի լինէր: Բայց ծխականներին, չը գիտենք ինչ պատճառներից դրդված, բոլորին չէին հրաւիրել. և այդ ճշդրիտ իրողութիւն է, քանի որ մենք մեր աչքով տեսանք մի քանիսին, որոնք ուրիշներից իմանալով ընտրութեան մասին, եկել էին եկեղեցի և այդտեղ միայն ստացան հրաւիրատոմսերը: Ժամկոչը յանձնելով հրաւիրատոմսերը, առարկում էր, թէ ինքն լաւ չը գիտէր, թէ ով որտեղ է կենում և այդ պատճառով չը կարողացաւ բոլորին յանձնել:

Ժամասացութիւնից յետոյ աւագ քահանան մի քանի խօսքով բացատրեց այդ օրվայ հրաւէրի նշանակութիւնը և առաջարկեց կատարել ընտրութիւնը: Ժողովականների մի մասը բողոքեց՝ թէ այդ օրվայ ընտրութիւնը անկանոն է, քանի որ ներկայ եղողները կազմում են ժողովրդի ամենաչնչին մասը, գրեթէ հինգերորդականը, և այդ հիման վրա պահանջում էր յետաձգել ընտրութիւնը: Սկսվեց ընդհանուր աղմուկը. մինչդեռ եկեղեցու մի մասում կովկասցիները բողոքում էին, որ ընտրութիւնն անկանոն է, պէտք է յետաձգվի, միւս մասում քահանան ժողովեց իր գլխին մի խումբ մարդիկ և սրանց սկսեց համոզել, թէ հարկաւոր է ընտրել պատգամաւորներ: Տէր հայրը մի խումբ մարդկանց առաջարկեց ստորագրել պատրաստած թղթերի վրա արդէն գրված ազգանունների տակ: 27 հոգի ստորագրեցին:

Մնացած մասը, տեսնելով ընտրութեան անկանոն լինելը, միանգամայն հրաժարվեց ստորագրել և հեռացաւ: Ժողովրդի ձայնը ապօրինի կերպով խեղդեցին:

Վաղը Թեմիս կառավարչին ուղարկում են այստեղից բողոք անարդար ընտրութեան մասին: Մեր խորին համոզմունքով, ընտրողական սկզբունքը վերականգնելու համար, անպատճառ պէտք է նորից ընտրութիւն լինի իր պատշաճ եղանակով ու ձևով:

Ե. Վ.

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

Փետրվարի 20-ին

Այս քանի ժամանակ է մեզանում խօսակցութեան նիւթը կազմում են գաւառիս Սաթխա գիւղում պատահած մարդասպանութեան և Աբու գիւղում չափից դուրս օղի խմելուց նոյն գիւղացիներից մէկի մեռնելու անցքը: Բանը նրանումն է, որ շահասիրութեան կիրքը այնքան էր կուրացրել Սաթխայի բաւական ունեոր մէկին, որ նա, բացի այն, որ միշտ զրկում էր իր վախճանված եղբօր ամուսնացած 27—28 տարեկան աշխատասէր որդուն, այլ և մերժում էր բաժանել և ունեցածի մասն տալ, սպառնալով մի կերպ վերջ դնել նրա կեանքին: Այս լուրը տարածվում է ամբողջ 160 տնից բաղկացած Սաթխա գիւղում և զարմանալի բան, չէ գտնվում մէկը, որ վերջ տար այդ անխիղճ մարդու վաղօրօք կազմած հրէշային դիտաւորութեանը: Այս փետրվարի 7/8 գիշերը, երբ սպանվածը գնացել էր ոչխարի փարախում քնելու, յիշեալ սաթխացին վերցնում է երկու թոռներին,—աղջկայ որդուն և իր տղայի որդուն, ու գնում սպանել տալու եղբօր որդուն փարախում: Դեռ ևս քնած չէ լինում սպանվողը, ուստի լաւ են համարում հարբեցնել արաղով, ապա թէ սպանել: Այդպէս էլ անում են: Հրացանի երկու հարուածով վերջ են տալիս խեղճի կեանքին: Մէկ գնտակը դիպել էր ձեռքի մէջ տեղը և անցել, միւսը մէջքից դիպել ու կրծքից անցել: Սպանվողի աղաղակից և հրացանի ձայնից հարևանները գալիս և փարախի տանիքի լուսամուտից կատարվող մարդասպանութիւնը տեսնում են, բայց ձայն չեն հանում: Երբ որ սպանվածը արիւնաքամվում է, վերցնում են տանում իրանց հետ անբաւականութիւն ունեցող հարևանի տան երդիկից վայր ձգելու, բայց բարեբաղդաբար այդ միջոցին մի գիշերային արկածախնդիր տեսնում է և սուլում, սրանք խլոյն վայր են ձգում սպանվածին ու փախչում: Միւս առաւօտ տանուտէրը փարախում գտել էր սպանվածի արեան հետքերը և հրացանը, որով սպանել էին: Կազմում են խլոյն օրինաւոր արձանագրութիւն կատարված չարագործութեան մասին և ուղարկում գաւառապետին: Երկու օրից յետոյ գաւառապետը, քննիչը և բժիշկը եկան գործը քննելու: Ոչ ոք, ի հարկէ, իր վրա չառաւ կատարված մարդասպանութեան յանցանքը, կողմնակի մարդիկներից էլ տեղեկութիւններ չը հաւաքեցին: Գործը քննիչի մօտ է. այս փետրվարի վերջերին էլ կանչված են մարդասպանները իր մօտ, տեսնենք ինչ ընթացք կառնի:

Ա.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 6 մարտի

«Մշակի» 26-րդ համարում, կարդալով պ. Սունդուկեանի ձեռ ուղղած նամակը, ես չափազանց զարմացայ, որ պ. Սունդուկեան կասկածանքներ է յայտնում այն մասին թէ ընտրված է եղել Մողնու եկեղեցու պատգամաւոր՝ շնորհով այն կուսակցութեան ջանքերի, որը ցանկանում է կաթողիկոսական գահի վրա տեսնել Խրիմեան հայրիկին և Արիստակէս սրբազանին:

Ամենահասարակ թւաբանական եղրակացութիւնների հիման վրա դժուար չէ ապացուցել պ. Սունդուկեանի առարկութիւնների միանգամայն անհիմն լինելը: Ահա թէ բանը ինչումն է: Ընտրութիւններին մասնակցում էին 96 ծխականներ, որոնցից 48 ձայն ստացաւ պ. Ա. Յովհաննիսեան, իսկ հակառակ կուսակցութեան պատկանող բժիշկ Գասպարեանը՝ 47: Սրանից հետևում է որ ներկայ եղող գրեթէ բոլոր ծխականները բաժանված լինելով երկու որոշ կուսակցութիւնների, ունէին համարեա հաւասար ձայներ և չէղոք դիրք բռնողներ չը կային կամ նրանց թիւը շատ չնչին էր: Մեր կուսակցութեան կողմից առաջարկված էին՝ պ.պ. Գասպարեանց, Սունդուկեան և Ծատուրեան, իսկ հակառակորդների կողմից՝ պ.պ. Ա. Յովհաննիսեան, իշխան Բէհբութեան, իսկ 3-րդ կանդիդատի վերաբերմամբ նրանց ձայները բաժանվում էին (Կուսիկեան, Քոչարեան և այլն): Պ. Սունդուկեան անձամբ ներկայ լինելով ընտրութիւններին, չէր կարող չը նկատել, որ իր անունը ընտրողական թերթիկների վրա պ. Ա. Յովհաննիսեանի անուան հետ կրկնվեցաւ ոչ աւելի քան 5—6 անգամ, այն ինչ պ.պ. Գասպարեանցի և Ծատուրեանի անունների հետ կրկնվում էր ոչ պակաս քան 40 անգամ (մի հանգամանք, որ կարող են կրկնել բոլոր ներկայ գտնվողները) և այդ տեղի ունեցաւ ոչ թէ հասարակ պատահականութեան շնորհով, այլ այն հակառակի պատճառներով, որով տրվում էին ձայներ պ.պ. Գասպարեանցին և Ծատուրեանին, որոնց թեկնածութիւնը այդ եկեղեցում դնվում էր առաջին անգամ: Ենթադրելով անգամ, որ մենք ունէինք միմիայն ամենամոլեռ կանդիդատի ստացած ձայները, դժուար չէ եզրակացնել, որ դուրս գալով պ. Ծատուրեանի 33 ձայները, պ. Սունդուկեան կը ստանար միմիայն 48—33=15 ձայն, եթէ նա ընտրողական պայքարում բռնած լինէր բոլորովին չէղոք դիրք և եթէ այդ յայտնի լինէր ծխականներին:

Մողնի եկեղեցու ծխական՝ Ա. Թադէոսեան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻՏՆԱԿԱՆ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ

Վաղուց էր, որ Դօրպատի համալսարանի դահլիճը չէր տեսած իր մէջ հանդիսականների այնպիսի ահագին բազմութիւն, որպիսին տեսաւ փետրվարի 17-ին, երկուշաբթի օրը:

Այդ օրը Դօրպատի համալսարանը և նրա հետ Դօրպատի ամբողջ գիտնական աշխարհը տօնում էր յայտնի բնագէտ Karl Ernst V. Baer'ի ծննդեան հարիւրամեայ տարեդարձի յիշատակը:

Երեկոյեան ժամը 6-ին, համալսարանի ահագին դահլիճն արդէն լի էր Դօրպատի հասարակութեան երկու սեռին պատկանող հանդիսականներով: Կանաչ ու գեղեցիկ ծաղիկներով շրջապատել էին ամբիօնը, իսկ դրա առաջ, ուր մի ժամանակ հռչակաւոր գիտնականը աւարտելով իր ուսումը Դօրպատի համալսարանում բժշկապետի աստիճանով տալիս էր իր վերջին հրաժեշտը իր «մայր համալսարանին», այնտեղ հարուստ ու ճոխ ծաղիկների և ծաղկեայ պսակների մէջ հանդէս էր դրված մեծ բնախոյզի մարմարիօնի կիսարձանը:

Հանդիսաւոր նիստը բացեց Դօրպատի բնախոյզների նախագահ պրոֆէսօր դոկտ. Գ. Դրագենդորֆ մի աղդու ճառով, որի մէջ նա վերին աստիճանի ոգևորված խօսքերով բացատրեց այդ օրվայ հանդէսի նշանակութիւնը և ցոյց տուեց թէ ով էր և է Karl Ernst v. Baer'ը թէ գիտութեան և թէ ամբողջ մարդկութեան համար: Ցարդելի ճառախօսը հանգամանօրէն նկարագրեց հրաչակաւոր բնախոյզի գիտութեան մէջ արած առաջադիմութիւնները, Դօրպատում, Վիլնայում և Բերլինում, ապա նա պատմեց թէ ինչպէս երեսելի բնախոյզը սկսեց հետամուտ լինել կենդանաբանութեան, բնաբանութեան, քիմիայի և բուսաբանութեան ուսումնասիրութեան և թէ ինչպէս յետոյ Կէօնիգսբերգում, իբրև այնտեղի համալսարանի պրոֆէսօր, սկսում է լոյս ընծայել իր գիտնական շարադրութիւնները, որոնք բոլորը միասին կազմում են մի ամբողջ դարաշրջան գիտութեան մէջ: Այստեղ յարգելի ճառախօսը մի բօսէ կանգ առաւ, որ մատնացոյց անէ մեծ բնագէտի կենդանաբանութեան և համեմատական անդամաբանութեան (Vergleichende Anatomie) ասպարիզում արած յայտնի հետազօտութիւնների վրա, որ ցոյց տայ, թէ ինչպէս Karl Ernst v. Baer-ը գիտութիւնների մէջ աւելի և աւելի հմտանալով, կենդանաբանութիւնից փորձում է դառնալ մարդաբան (Anthropolog), նա սկսում է ուսումնասիրել կերպաւորութեան պատմութիւնը (Entwickelüngsgeschichte) և «եղածի» հիման վրա եզրակացութիւններ անել «ապագայում լինելիի» մասին: Baer-ը բնագէտից դառնում է բնական փիլիսօփայ (Naturpfilosoph), որը մի ճշդրիտ հայեացք գցելով «ամբողջի» վրա՝ պարզաբանում էր բնութեան ամենագաղտնի երևոյթները, գտնում ու դասաւորում էր նրանց էութեան ընդհանուր օրէնքները:

Ցարդելի պրոֆէսօրը վերջացրեց իր ճառը, դառնալով դէպի հռչակաւոր բնախոյզի մարմարիօն կիսարձանը, մատուցանելով մեծ բնագէտի հանճարին Դօրպատի «Բնախոյզների ընկերութեան» կողմից խորին երախտագիտութեան և յարգանքի հաւաստիքը: Այդ րօպէին բոլոր հանդիսականները ոտի կանգնեցան: Նախագահից յետոյ ընկերութեան քարտուղար պրոֆէսօր դոկտ. Դէնտել մի դասախօսութիւն կարդաց հետևեալ վերնագրով. «Համեմատական անդամաբանութեան և կերպաւորութեան պատմութեան նշանակութիւնը՝ կենդանաբանութեան ինդիրների համար»: Իր այս վերին աստիճանի հետաքրքիր դասախօսութեան մէջ պրոֆէսօրը ցոյց տուեց, թէ ինչպէս Baer-ի արած հետազօտութիւնները և գիտերը համեմատական անդամաբանութեան և կերպարանափոխութեան պատմութեան ասպարիզում ներկայումս իբրև հիմք ծառայում են արդի կերպարանափոխութեանը, յետոյ նա յիշեցրեց թէ ինչպէս երեսելի բնագէտը հէնց սկզբից հերքելով հին բնական փիլիսօփաների բնութեան օրէնքները չը համապատասխանող ենթադրութիւնները՝ (Hypothesen) ապացուցանում է կենդանիների զանազան տեսակների սկզբնական սաղմնային կերպաւորութեան աստիճանների (Embryonale Entwickelüngstadien) միատեսակ լինելը և ընդունում է բոլոր չորս մեծ դասակարգի՝ ողնաշարաւոր, յօդաւոր, փափկամարմին և պատեանաւոր (Wirbel, Glieder, Weich und Schalthiere կենդանիների նախնի միաձև լինելը (Gemeinsame Urformen): Այս հիմքերի վրա հաստատած կենդանաբանութիւնը և ընդհանրապէս կենդանաբանութիւնը (Biologie) շնորհիւ Բնապատում արած վանդակիկի (Zelle) գիտին Դարվինի օրով և հէնց իսկ նրա օգնութեամբ ընդունում է այն հաւանականութիւնը (Hypothese) որ բոլոր կենդանիների մէջ տիրում է մի տեսակ գենեթիքական յաջորդութիւն (genetischer Zusammenhang): «Եթէ այսօր, շարունակեց դասախօսը, Baer-ի ոգին կարող լինէր տեսնել իր հանճարի ստեղծած սկզբունքների հիման վրա արդի կենդանաբանութեան և կենսաբանութեան արած առաջադիմութիւնը ու զարգացած դրութիւնը, տեսնել՝ որ այժմեան գիտութիւնը ընդունում է նոյն սկզբունքը, որն է արդիւնք նրա գիտնական հետազօտութիւնների, որ արդի կենդանաբանութիւնը նոյնպէս ընդունում է բոլոր ձևի կենդանի էակների համար միմիայն մի միաւորական ընդհանուր կերպաւորութեան օրէնքը, որ բնութեան մէջ ամէն ինչ կերպաւորվում է պարզ և հասարակ, չը նայելով ձևերի բազմատեսակ լինելուն, անշուշտ նա կուրախանար անչափ և մարմնացած կը տեսնէր իր այն խօսքը թէ՝ ճշմարտութեան կնիքն է պարզութիւնը»: Այս խօսքերով վերջացրեց յարգելի դասախօսը իր գեղեցիկ դասախօսութիւնը, յայտնելով հանդիսականներին իր խորին շնորհակալութիւնը՝ որ նրանք իրանց ներկայութեամբ չը զլացան յարգել հռչակաւոր բնագէտի հարիւրամեայ ծննդեան տարեդարձի յիշատակը:

Դօրպատ. Լ. Ց.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ՄԵԼԻՏՈՊՈԼԻՑ մեզ գրում են. «Կիրակի օրը, փետրվարի 23-ին՝ քաղաքային հայոց եկեղեցում եկեղեցական պատգամաւորի ընտրութիւն եղաւ: Նախ քան ընտրութիւնը՝ նախագահ հայր Սրապիօն Սամուէլեանց համառօտ կերպով բացատրեց ընտրութեան նշանակութիւնը և յորդորեց ժողովրդին, որ նրանք ընտրութեան ժամանակ ի նկատի չունենան իրանց անձնական հաշիւները և, լսելով միայն իրանց խղճի ձայնին, ընտրեն այնպիսի պատգամաւոր, որը կը ցանկանայ տեսնել Լուսաւորչի գահի վրա արժանաւոր հայրապետ: Ապա գաղտնի քուէարկութեամբ եկեղեցական պատգամաւոր ընտրվեց պ. Պետրոս Ջերնիկեան, որը առաջիկայ մարտի 8-ին՝ Սիմֆերօպոլում պէտք է մասնակցի պատգամաւորի ընտրութեան, իսկ այս վերջինը ժամանակին գնալով Նոր-Նախիջևան պէտք է մասնակցի թեմական պատգամաւորի ընտրութեան: Պ. Ջերնիկեան կրթված անձնաւորութիւն լինելով, լիայոյս ենք, որ կը գործէ քաղաքիս հայ հասարակութեան տրամադրութեան համեմատ, իսկ հասարակութիւնը տրամադրված է տեսնել կաթողիկոսական գահի վրա Խրիմեան հայրիկին, կամ Արիստակէս սրբազանին:»

—

ԱԿԿԵՐՄԱՆԻՑ մեզ գրում են. «Փետրվարի 23-ին, ս. պատարագից յետոյ, Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի կառավարիչ Գ. Եպ. Աղաթիրեանի առաջնորդութեան համաձայն՝ կայացաւ ծխականների ժողով, որ իր ժամանակին կարդաւն իրանց եկեղեցու ներկայացուցիչը ճանապարհ ձգել Քիշինեվ, որտեղ կատարվելու է թեմական պատգամաւորի ընտրութիւնը: Հրաւիրված էին մօտ ութսուն հոգի. ներկայ եղողների թիւը կլինից շատ էր. մասնացոյց արին չորս մարդկանց վրա, որոնցից ձայնի բազմութեամբ ներկայացուցիչ ընտրվեց պ.պ. Մարկոս Աստուածատրեան, անձնափոխանորդ՝ Մկրտիչ Աւագեան. ընտրութիւնը շատ խաղաղ անցաւ:»

—

Բաթումից մեզ գրում են, որ այստեղի հայոց դպրոցի առաջ ուսուցիչ պ. Սիմէօնեան հաշիւ չէ տալիս՝ իր ծախսած փողերի մասին. իսկ ժողովուրդը անհամբեր սպասում է և նոյն իսկ պահանջում է, որ այդ հաշիւը օր առաջ ներկայացվի հասարակութեան:

—

Մեզ խնդրում են տպագրել հետևեալը. «Լրագրութեանը արդէն մի տարի առաջ յայտնի է, որ մի ոմն Ներսէս Արղութեան, ցրտի պատճառով ոտքերից զրկվելով՝ մնացել է թէ ինքն և թէ՝ իր հինգ հոգուց բաղկացած գերդաստանը թշուառ դրութեան մէջ, կարօտ օրական հացի: Անցեալ անգամները պատահելով նոցա, սրտաճմլիկ տեսարան նկատեցի՝ սոված, քաղցած, տկլոր և միանգամայն զուրկ մի որ և իցէ ապրուստի միջոցից, բնակվում են խարխուլ հին տան մէջ՝ Շաւի գիւղում: Ահա իսկապէս աղքատը, ահա մի ընտանիք, որին մարդկային հոգացողութիւն է հարկաւոր:»

—

Մեզ խնդրում են տպագրել հետևեալը. «Այս օրերս Թիֆլիսի մի խանութի առջև անցնելով, ականատես եղայ այսպիսի մի տեսարանի: Հրէայ խանութպանը սպառնալով ծեծել և սպանել իր կնոջը՝ առաջարկում էր նրան դուրս գալ իր տանից, ասելով, «ես էլ քեզ չեմ ուզում պահել»: Խեղճ կինը, ինչ ասել կուզի, արտասուքը աչքերին, դիմադրում էր: Բանից երևաց, որ այն օրերում հրէայի երկու վաքրահասակ որդիքը դիֆտերիտից մեռել էին, և ահա այլ ևս ոչ մի զաւակ չունենալով, հրէան աւելորդ է համարում պահել այն կնոջը, որը իր կին է եղել, իր որդոց մայր է եղել, միայն այն պատճառով որ այլ ևս այդ կնոջից որդիք չունի: Հաշիւ կարելի եղաւ կուզին վերջ տալ.—իսկ թէ ինչ կը լինի հետևանքը այդ խռովութեան, ի հարկէ, դիտենալ դժուար է:»

—

Տեղական «Новое Обозрѣніе» լրագիրը հաղորդում է իբր լուր, որ Էջմիածնից գալիս է մի եպիսկոպոս սինոդի կողմից, մարտի 8-ի պատգամաւորական ընտրութեան նախագահելու համար:

—

Թիֆլիսի առաջնորդ Մամբրէ եպիսկոպոսը կարգադրել է, որ իր թեմում մի քանի նոր վիճակներ կազմակերպվին, որոնք մինչև այժմ գոյութիւն չեն ունեցել: Այդ վիճակներից ընտրվել են պատգամաւորներ՝ թեմական պատգամաւորի ընտրութեան մասնակցելու համար:

—

«Մշակի» անցեալ համարում տպված դաւառական պատգամաւորների անուանացուցակի մէջ երկու սխալներ են մտել. Ղազախի երկրորդ մասի պատգամաւորներից մինի աղգանունը Յով. Աստուածատուրեան է և ոչ Տէր-Աստուածատուրեան: Ապա Սուխումի պատգամաւոր Մուրադեանի անունը Յակոբ է և ոչ թէ Գէորգ:

—

Թէ ինչ վիճակի է հասել պ. Աբգար Յովհաննիսեան իր «Արձագանքով», ցոյց է տալիս հետևեալ փաստը: Կարդացէք և ապշեցէք: «Հաստատ աղբիւրներից տեղեկանում ենք, որ սոյն մարտի 8-ի ընտրողների մի ստուար խմբի առաջարկութեամբ քուէարկուելու է նաև «Նոր-Դարի» խմբագիր-հրատարակիչ պ. Ս. Սպանդարեանը: Շատ խնդիրներում «Նոր-Դարի» և «Արձագանքի» աշխարհահայեցողութիւնը միանգամայն տարբեր է, բայց մեզ սիրելի է արձանագրել ի պատիւ մեր լրագրութեան, որ «Նոր-Դարը» մեր սուրբ եկեղեցու նուիրական շահերին միշտ նախանձախնդիր և պաշտպան է եղել: Որքան մեզ և բովանդակ աղգի համար տարօրինակ պէտք է թուէր այն հրապարակախօսի թեկնածութիւնը, որ մեր եկեղեցին աղանդ է կոչել, նոյնքան բնական պէտք է լինի պ. Ս. Սպանդարեանի թեկնածութիւնը, որ մեր առաքելական եկեղեցին միշտ համարել է մեր աղգութիւնը պահպանող ամենազօրեղ գործօն:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԲԻԱՑԻՑ

—

Կ. Պոլիս, փետրվարի 23-ին

Թէև այստեղ կաթողիկոսական ընտրութեան խնդիրն օրուան խնդիրն է, սակայն կարելի է ասել թէ արտաքուստ մեռելութիւն է տիրում: «Արևելք» ու «Հայրենիք» լրագիրները շարունակում են՝ ինչպէս ամեն խնդրի, նոյնպէս և այս խնդրի առիթով իրանց պատերազմը, բայց անուղղակի միջոցներով, լռիկ կերպով, եթէ կարելի է այսպէս ասել՝ «Արևելքն» պարզել է «Արձագանք» լրագրի դրօշակը, իսկ «Հայրենիք» լրագիրը Մշակական է:

Այստեղ ընդհանուր հետաքրքրութեամբ են հետևում Թիֆլիսի թեմական պատգամաւորի ընտրութեանը: Կաթողիկոսական ընտրութեան պայքարի մէջ Տաճկաստանի հայերը զեկավարվում են Թիֆլիսի ոգևորութեամբ:

Սկզբում գրեթէ անտարբերութիւն կար, երբ յանկարծ «Հայրենիքը» հրատարակեց պ. Գրիգոր Արծրունու բաց նամակը Թիֆլիսի ընտրողներին: Այդ նամակը իր պարզութեամբ հանդերձ՝ շատ աղդու ու զօրաւոր երևեց և թողաց ապաւորութիւնը լաւ եղաւ. ժողովուրդը սկսեց հետաքրքրվիլ թէ յունվարի 26-ի և փետրվարի 8-ի ընտրութիւնների արդիւնքներն ինչ պիտի լինեն: Ամեն մէկը անհամբեր սպասում էր, երբ «Արևելքն» իր փետրվարի 10-ի №-ի մէջ՝ իր առաջին երեսին հրատարակեց յունվարի 26-ի ընտրութիւնների առիթով հետևեալը.

«Մամուլի ներկայացուցիչներն այդ ցանկի մէջ կը գտնուին «Արձագանքի» խմբագիր պ. Աբգար Յովհաննիսեան՝ առաջին կարգի առաւելագոյն քուէն ստացած իր թաղի եկեղեցւոյ մէջ, «Մշակի» խմբագիր Գ. Արծրունի՝ վերջին կարգին նուազագոյն քուէն ստացած իր թաղի ընտրողներէն. իսկ նորագոյն տեղեկութեանց նայելով, պ. Ս. Սպանդարեանն չորս չրջանակներէ միանգամայն ընտրուեր է:»

Կ. Պոլսի մէջ ամենքը զարմացած մնացին: Իրաւ է, այդ լուրը գրուն «Արձագանքի» Պոլսի թղթակիցն էր, սակայն «Արևելքը» հիւրասիրել էր այդ և խմբագրականով ևս յանձնարարել էր: «Հայրենիքը» հաղորդեց թէ՝ բացի պ. Արծրունուց և պ. Աբգար Յովհաննիսեանից ոչ մի ուրիշ խմբագիր ընտրված չէ: Այս յայտարարութեան վրա «Արևելքի» երկրորդ երեսի խմբագրութիւնը («Արևելքն» երեք տեսակ խմբագրութիւն ունի, ամեն երեսի համար մէկ խմբագրութիւն, որոնք քիչ շատ իրար հակառակ են, և մի և նոյն թերթի մէջ իրար դէմ են կռուում) հարկադրվեց հրատարակել ընտրվածների անունները, սակայն առանց որ և իցէ մեկնութեան: «Հայրենիքը» փետրվարի 16-ին և 17-ին հրատարակեց Բաթումից երկու թղթակցութիւն Թիֆլիսի ընտրութիւնների առիթով և մէկն էլ՝ Թիֆլիսից, այսօր, կիրակի («Հայրենիքը» հրատարակվում է չաբաթը եօթն օր. նոյն իսկ կիրակի օրերն էլ): Պօլսի մէջ մեծ ուրախութիւն և ցնծութիւն տիրեց: Պատմում են թէ «Հայրենիքի» այն №№-ից, որոնց մէջ գրված է մշակականների յաղթութիւնը Թիֆլիսում և ընտրութիւնների մանրամասնութիւնները, հազարաւոր օրինակներով են ցրվել:

Եթէ Թիֆլիսն իր պատգամաւորական ընտրութիւնով կաթողիկոսական որոշ թեկնածուների, այն է՝ Խրիմեան Հայրիկի և Արիստակէս սրբազանի համար իր համակրութիւնը լիովին ցոյց տայ, աղդեցութիւնն ահագին կը լինի Տաճկաստանի հայերի վրա, և մեծապէս կը ներգործի այստեղի աշխարհական պատգամաւորների ընտրութեան վրա:

Մամուլը այստեղ ստիպված է կողմնակի ակնարկներ միայն անել կաթողիկոսական ընտրելիների վրա, քանի որ դրաքնութեան կողմից բացարձակապէս արգելված է ընտրելիների անունները տալ: Անուղղակի կերպով արած առաջարկութիւններից այժմ ամբողջ ժողովուրդը գիտէ թէ ընտրելիներն որոնք են, այսինքն՝ թէ «Հայրենիքինը» Խրիմեանն և Սեդրակեանն է, իսկ «Արևելքինը»՝ Աշըգեանը: Կարծում են թէ պատրիարքն ինքը պահանջել է դրաքնութիւնից, որ չը գրվի ընտրելիների մասին:

Այս բօսէիս դեռ հարց է՝ Տաճկաստանից թեմական պատգամաւորներ կերթան Էջմիածին: Ամենքը պնդում են թէ կերթան, սակայն մեզ շատ հաւանական չէ թուում այդ. եթէ գնան էլ, այնպիսի պայմանների մէջ կը լինեն, որ գուցէ աւելի լաւ համարվի բոլորովին չը գնալը:

Մի քանի տեղեկութիւններ ստանալուց յետոյ, յաջորդ նամակով կը գրեմ այս մասին:

***

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թէհրան, 15-ին փետրվարի

Պէտք է հաստատել, իբրև մի ուրախալի երևոյթ, որ վերջին տարիներս Պարսկաստանի հայ ժողովուրդը սկսել է կեանքի նշաններ ցոյց տալ: Այդ ժողովուրդը ոլորան որ ստրկացած, բարոյապէս փչացած է բաղմադարեան մահմեդական ճնշողական բռնակալութեան և խեղդիչ մթնոլորտի աղդեցութեան տակ, բայց չփսկելով աւելի լուսաւոր երկիրների հետ առևտրական յարաբերութիւնների պատճառով, միւս կողմից հետզհետէ դպրոցներ հաստատելով, լրագիրներ կարդալով, ձգտում է իր թմրութիւնից և անշարժութիւնից դուրս գալ. նա արդէն սկսել է քննադատել, բաղդել իր իրաւունքների մասին, հետաքրքրութիւն անել և այդ արդէն կենդանութեան նշան է: Քիչ քիչ հասարակական կարծիք ասուածը կազմ և ասպն է ստանում պարսկահայերի մէջ: Թէհրանում անցեալ տարի կազմվեց նոր ուսումնասիրաց ընկերութիւն, երկսեռ ազգային դպրոցները բարեկարգելու և հաստատուն պահելու համար, հաստատվեց Բաֆֆի անունով մի ընթերցարան-գրադարան, վերանորոգվեց հին ընթերցասիրաց ընկերութիւնը. այս ամեն թէհրանում տեղի ունեցան մի շարք գրական երեկոյթներ, եղան մի քանի հրապարակական դասախօսութիւններ, որոնց նիւթը հայութեան առօրեայ խնդիրներն էին—թիւրքաց հայերի հարստահարութեան խնդիր, կաթողիկոսական խնդիր, էջմիածնի խնդիր, աղգային եկեղեցու վերանորոգութեան խնդիր, իգական սեռի դաստիարակութեան խնդիր: Այդ երեկոյթներին անխտիր մասնակցում էին ըստ հրաւիրանաց դպրոցի վարչութեան ոչ միայն հայ լուսաւորչականները, այլ և հայ-բողոքականները. առաջին անգամ և հայ կինը ցոյց տուաւ իր ներկայութիւնը: Ճշմարիտ է, այդ բոլորի սկզբնապատճառը, հեղինակը մի քանի երիտասարդներ են, ըստ մեծի մասին օտար երկրներում կրթութիւն առած և օտար տեղերից եկած, բայց ժողովրդեան ցոյց տուած համակրութիւնը, հայ-իգական սեռի յառաջելը, հայ-բողոքականների մասնակցութիւնը, մեծ ապացոյց և դրական է, որ այդ երիտասարդների ընտած ուղղութիւնը և արած գործը նպատակայարմար է և պիտի բարգաւաճէ: Երեկոյթների կազմակերպողներն երկսեռ դպրոցի հոգաբարձութիւնը և «Բաֆֆի» ընկերութեան վարչութիւնն են, իսկ դասախօսները—Հ. Առաքելեան (ատենապետ հոգաբարձութեան), բժշկապետ Բազիլ (տնօրէն «Բաֆֆի» ընկերութեան), Յովհաննէս խան Մասեհեան (տեսուչ դպրոցի), Բագրատ Ատամանեան (ուսուցիչ), Յակոբ Ղազարեան (ուսուցիչ), տիկին Ղազարեան (վարժուհի), Յովսէփ Միրզայեան, Միհրան Տամպուրաճեան (ուսուցիչ), Սիմէօն Օհանեան: Որոշված է բոլորովին մէկ կողմ դնել զուտ կրօնական խնդիրները: Այդ երեկոյթներից մինը նշանաւոր էր նրանով, որ ժողովուրդը խորին ուշադրութեամբ լսեց Խրիմեան հայրիկի վիպատար կենսագրութիւնը, մի ուրիշ երեկոյթ նշանաւոր էր նրանով, որ ժողովուրդը զբաղվեց յատկապէս կաթողիկոսական խնդրով. այդ երեկոյթին, պ. Հ. Առաքելեան մանրամասն տեղեկութիւն տուեց թէ ինչպէս է ընտրվում թեմական պատգամաւորը, ինչպէս է կատարվում կաթողիկոսի ընտրութիւնը: Այդ դասախօսութիւնների աղդեցութեան տակ, ժողովուրդը լուսաբանվելով մի որոշ համոզում կայացաւ իր մէջ, թէ ինչ տեսակ անձն պիտի կոչվի բաղմելու ս. Լուսաւորչի աթոռի վրա:

***

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 մարտի: Հէսէնի մեծ դուքսի մահվան պատճառով Բարձրագոյն պալատում սուգ է նշանակված չորս շաբաթով:

ՊԱՐԻԶ, 4 մարտի: Արդարադատութեան մինիստրը մի օրինագիծ ներկայացրեց, որով առաջարկում է մահվան պատժի ենթարկել նրանց, որոնք յանցաւոր են համարվում պայթիւն նիւթերով գոյքերը աւերելու համար:

ՊԱՐԻԶ, 4 մարտի: Այսօր առաւօտ ենթադրութիւն կար հեռացնելու այստեղի բոլոր յայտնի անարխիստներին, և վճռված էր ձերբակալել նրանց, որոնց մօտ կը գտնվի պայթող նիւթեր, զէնք և կամ դրդիչ թղթեր. արդէն կարգադրութիւն է եղել մօտ 30 մարդկանց մօտ խուզարկութիւն անելու՝ մեծ մասամբ օտարերկրացի յեղափոխականների մօտ. առանձին միջոցներ են ձեռք առնված արձանները պահպանելու համար և զինուորական պահակները ուժեղացրած են:

ԼՕՆԴՕՆ, 4 մարտի: Այսօր այստեղ կայացաւ քարածխի հանքերի բանուորների դաշնակցական ժողով, քննելու աշխատանքները վերանորոգելու հարցը. նիստը դռնփակ էր. այնու ամենայնիւ լուր տարածվեց, որ աշխատանքները կը վերանորոգվեն միւս երկուշաբթի: Քարածխի գինը իրաքանչիւր ոտնին 4 շիլինգ եղաւ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 մարտի: Փետրվարի 29-ից մինչև մարտի 3-ը առանձին մասնաժողովը ստացել է աւելի քան 11,700 բուբլի:

ԼԻԲԱՎԱ, 5 մարտի: Ռուսաստանի սովեալների համար հաց բերող ամերիկական «Indiana» նաւին դիմաւորելու համար ընդ առաջ գնացին «Стражъ» և երկու ուրիշ մասնաւոր նաւեր՝ հասարակութեան հետ միասին: Ամերիկացիներին ողջունեցին ոգևորութեամբ. թնդանօթներից արձակեցին. նաւաստիները պատուի նշան արեցին. ամերիկացիներին ոգևորված ցոյցեր արեցին իշխանութեան ներկայացուցիչները և ժողովուրդը. երբ ափն էին իջնում՝ թնդաց ոգևորված «ուրա»: Ապա սկսվեց բեռների իջեցնելը նաւից, որը միւս օրը կը մտնի նաւահանգիստ:

ՊԱՐԻԶ, 2 մարտի: Այսօր խուզարկեցին 35 անարխիստների տները. նրանցից հինգը ձերբակալված են. շատ թղթեր են բռնված. մէկի մօտ գտնվել է կալի, դալվանական սիներ, և հրացանների շատ խողովակներ. մէկի մօտ գտել են ռումբ, որը, ինչպէս երևում է, լցված էր՝ բայց ոչ դրի մօտ դինամիտ չէ եղել: Այսօր նոր խուզարկութիւններ են եղել անարխիստների մօտ. հաւատացնում են, որ պօլիցիան յոյս ունի շուտով ձերբակալելու Լօբաու զօրանոցների պայթիւնի գլխաւոր յանցաւորին:

ՏԵՂԵԿԱՑՈՅՑ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Ճանապարհորդական գնացքներ Թիֆլիսի և Բաթումի մէջ.

№ 1

ԲԱԹՈՒՄԻՑ մեկնում է . . . . 9 ժ. 45 ր. առաւ.
ԹԻՖԼԻՍ հասնում է . . . . . 9 » 52 » երեկ.

№ 2

ԹԻՖԼԻՍԻՑ մեկնում է . . . . 9 ժ. 30 ր. առաւ.
ԲԱԹՈՒՄ հասնում է . . . . 9 » 45 » երեկ.

Պոստային գնացքներ Բաթումի և Բագուի մէջ.

№ 3

ԲԱԹՈՒՄԻՑ մեկնում է . . . . 11 ժ. 25 ր. երեկ.
ԹԻՖԼԻՍ հասնում է . . . . . 12 » 25 » ցերեկ.
ԹԻՖԼԻՍԻՑ մեկնում է . . . . 1 » 20 » ցերեկ.
ԲԱԳՈՒ հասնում է . . . . . 7 » 30 » առաւ.

№ 4

ԲԱԳՈՒԻՑ մեկնում է . . . . 11 ժ. 10 ր. դիշեր
ԹԻՖԼԻՍ հասնում է . . . . 5 » 50 » երեկ.
ԹԻՖԼԻՍԻՑ մեկնում է . . . 6 » 50 » երեկ.
ԲԱԹՈՒՄ հասնում է . . . . 8 » 15 » առաւ.

Խառն գնացքներ Թիֆլիսի և Գանձակի մէջ

ԹԻՖԼԻՍԻՑ մեկնում է . . . 9 ժ. 20 ր. երեկ.
ԳԱՆՁԱԿ հասնում է . . . . 10 » 10 » առաւ.

ԳԱՆՁԱԿԻՑ մեկնում է . . . 7 » 35 » երեկ.
ԹԻՖԼԻՍ հասնում է . . . . 7 » 30 » առաւ.

—

ՌՈՒՍԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՇՈԳԵՆԱՒԵՐ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 4 ժամին երեկոյեան, չրջական րէյսով, Բաթումից դէպի Օդէսա.

ՇԱԲԱԹ, 8 ժամին երեկոյեան նամանապէս։

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 7 ժամին երեկոյեան, Բաթումից դէպի Կ. Պոլիս։

Խմբագիր-հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՁԻԹԱՀԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ

Յ. ԹԱՅԻՐՈՎԻ ԵՒ Կ. ԱԼԻԽԱՆՈՎԻ

ԹԻՖԼԻՍՈՒՄ

Մեծ պասի համար գործարանում կայ մեծ քանակութեամբ ծախելու համար հետեւեալ տեսակների ՁԷԹ. 1) ԿԵՐԱԿՐԻ՝ քունջութի, կանեփի, կտաւատի. 2) ԱՅՐԵԼՈՒ, 3) ԵՓԱԾ՝ ներկելու համար, այլ և կովեր և եզներ կերակրելու համար։ Քունջութի ձէթը մաս մաս ծախվում է՝ մէկ և երկու ֆունտանոց ամաններում հետեւեալ խանութներում. 1) Դեղատան ապրանքների կովկասեան ընկերութեան վաճառատանը. 2) Զօվանովի խանութում, Գոլովինսկի պրոսպէկտ, տուն Դոբրժանսկու և Վօրոնցովի արձանի մօտ. 3) Ալիխանովի խանութում, Գոլովինսկի պրոսպէկտ, տուն Դոբրժանսկու. 4) Միրզախանովի խանութում, Պուշկինսկայա փողոց. 5) Բեժանովի խանութում, Միքայելեան փողոց. 6) Բագարովի խանութում, Նիկոլաեվսկայա փողոց, սեփական տուն. 7) Վարվարովի խանութում, Գոլովինսկի պրոսպէկտ տուն Օրբելիանովի. 8) Սարաջեվի խանութում, Գոլովինսկի պրոսպէկտ, տուն Բաբանասովի։

Բոլոր տեսակ ձէթերի մաս մաս վաճառումը սեփական վաճառատներում. 1) Սոլդատսկի բազար, տուն Բուղդանովի, մանավաճառների մօտ. 2) Թուրքաց Մայդան, քաղաքային բուտկայում. 3) Օլգինսկայա փողոց, տուն Մեբուրնութովի, քարածուխի պահեստի կողքին և 4) Հաւլաբարի հրապարակ, քաղաքային բուտկա № 1։

Պահեստը և գրասենեակը գտնվում են Երևանեան շոսսէյի վրա, սեփական տանը։

(№ 18) 7—14 (Ե. շ.)

կենտրոնական գրավաճառանոցում ծախվում են

ԱՏՐՊԵՏԵԱՆԻ

Թիւրքահայերի նորագոյն կեանքից գրուածները

„Ալմաստ“ վէպ . . . . . 2 ռուբլի
„Խէ-կարապետ“ վէպ . . . . . 1 »
„Շուշան“ ողբերգութիւն (օպէրայի համար) երաժշտութիւն Կարամուրզայի . 1 »

(№ 4) 8—10 (2)

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Շոգենաւերի կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկուշաբաթը մի անգամ, չորեքշաբթի 25 դեկտեմբերից (6 յունվարից) սկսած և փոխադարձ

Բաթումից Մարսէլ, մանելով Տրապիզօն, Սամսօն, և Կ. Պոլիս։

ԲԱԹՈՒՄԻՑ ՇՈԳԵՆԱՒԵՐԸ ԴՈՒՐՍ ԵՆ ԳԱԼԻՍ

Չորեքշաբթի, 19 փետրվարի (2 մարտի) շոգենաւ ԱՐՄԷՆԻԱ նաւապետ ՏԻԲԱԼ
— 4/16 — — ԱՆԱՏՕԼԻԱ — ԳԱԲՐԻԳ
— 18/30 — — ՄԻՆԳՐԷԼԻԱ — ԲՈՒԼԴՈՒԻՐ
— 1/13 ապրիլի — ԱՐՄԷՆԻԱ — ՏԻԲԱԼ

և այլն, երկու շաբաթ մի անգամ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ օրերը, 4 ժամին կէսօրից յետոյ։

Տօմսակների գները ուղղակի երթևեկութեան Բաթումից դէպի Պարիզ իսկական գնից պակսեցրած են։

Տեղեկութիւնների համար ճանապարհորդների և բեռների մասին թող բարեհաճեն դիմել ընկերութեան ագենտներին. ԲԱԹՈՒՄՈՒՄ պ. Դարանիսին, Նաբերէժնայա, ԹԻՖԼԻՍՈՒՄ պ. Վիկտոր դ'ԱՐՆՕԻՆ, Մինչին-փողոցում, նախկին գեներալ Տէր-Աստուրովի տանը, ԲԱԳԻՈՒՄ, Սամուէլ Դիլդարովին, Կոլիբրիակինսկայա հրապարակ, և ՆՈՎՈՐՕՍԻՑՍԿՈՒՄ պ. Լուի Բրնօին։

(№ 124) 9—10 (Ե. շ.)

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ սրանով յայտնում է ընդհանուր գիտութեանը, որ այս մարտի 11-ին, ցերեկվայ 12 ժամին աճուրդ է նշանակված կապալով տալու Զինուորական Հիւանդանոցի և նոր կառուցանվող զօրանոցների մէջ գտնվող տեղերը՝ նաւթլուղում, քաջ հանելու համար։

Պայմանների մասին կարելի է տեղեկանալ Վարչութեան գրասենեակում ամեն օր, առաւօտեան 10 ժամից մինչև 2 ժամը, բացի տօն օրերից։ 1—2

(№ 19) Գ. Գ. ԼԱՐՇԷԻ ՍԵՐՄԵՐԻ ՊԱՀԵՍՏՈՒՄ

Միխայլովսկի կամուրջի վրա, մագազին № 174, ՍՏԱՑՎԱԾ ԵՆ ԹԱՐՄ ՍԵՐՄԵՐ ԲԱՆՁԱՐԵՂԷՆՆԵՐԻ ԵՒ ԾԱՂԻԿՆԵՐԻ։

Պրէյսկուրանտները ուղարկվում են ձրիապէս։ 9—25

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻԳԱԿԱՆ ՊՐՕՖԷՍԻՕՆԱԼ ԱՐՀԵՍՏԱՆՈՑԻ ԱՐՀԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԴԱՍԵՐ.

1) Հանդերձների և սպիտակեղէնի ձեւի դասեր Գլօդզինսկու մեթոդով և Շեղզէրի ֆրանսիական մեթոդով։
2) Կարի դասեր մոդային ժուրնալներով։
3) Հարթակարի և զանազան ձեռագործերի դասեր։
4) Դասեր տարրական և ծխական դպրոցների ուսուցչուհիներ պատրաստելու համար։

Վճարը ամսական 2 ռուբլի. երկու անգամ շաբաթը 5-ից մինչև 7 ժամը երեկոյեան։

Տարրական և ծխական դպրոցների ուսուցչուհիները կարող են այցելել դասերը ձրի։ (№ 23) 5—40

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԷՅԻ ՎԱՃԱՌՄԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏՆԵՐԻ

Կ. ԵՒ Ս. ՊՈՊՈՎ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ

БРАТЬЯ К. и С. ПОПОВЫ

Վարչութիւնը Մոսկվայում, Կուզնեցկի Մոստ փողոցում, տուն Տրետեակով եղբայրների.

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՍԵՓԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՆԵՐԸ

ՄՕՍԿՎԱ. Կուզնէցկի Մոստ, տուն Տրետիակով եղբայրների.
« Ստրաստնոյ վանքի մօտ, տ. Դուբրովինի.
« Կալուժսկայա Վ. օրօտա, տ. Գայդէնի.
« Կրասնիեա Վ. օրօտա, տ. Գոլիկովի.
« Տագանսկի հրապարակի և Սիմոնովսկի փողոցի անկիւնում, տ. Կոսիչկինի.
« Իլինսկիա Վ. օրօտա, Լիբիանսկո-Իլինսկի առևտրական հաստատութեան մէջ, № 32.
« Միասնիցկի Վ. օրօտա, տ. Ֆիրսանովի.
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Նեվսկի պրոսպէկտ, Կազանեան մայր-եկեղեցու դիմաց, տ. Գոնսէնի.
ՎԱՐՇԱՎԱ. Սենատորսկայա փողոց, տ. № 461.
« Նովի-Սվէտ փողոցում, տ. կօմս Ստարիցկու, № 1252.
ՎՕՐՕՆԷԺ. Բոլշայա Դվորյանսկայա փողոց, տ. Սամօֆալովի.
ԿԻԵՎ. Աղէքսանդրովսկայա փողոց, տ. Լիչկովի.
« Կրեչչատիկա, տուն, Կիրգէյմի.
ԱՍՏՐԱԽԱՆ. Եկատերինեան (Մոսկովեան) փողոց, հայոց Աղաբաբեան դպրոցի հոգաբարձական խորհրդի տուն.
ԲԱԳՈՒ. Գուբէրնսկայա և Ցիցիանովսկայա փողոցների անկիւն, տուն Մէլիքովի.
ՎԻԼՆՕ. Մեծ փողոց, Թատրոնի դիմաց, տուն Պուպկէնայի.
ԴԻՆԱԲՈՒՐԳ, Պետերբուրգեան, փողոց, տուն Լեվիտի.
ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՎԼ, Նովո-Գոստինիչ փողոց, տուն Զիզիտի, խանութ № 2.
ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐ. Կրասնայա փողոց, տուն Կոնանենկո.
ԵԼԵՑ. Տօրգովայա փողոց, տուն Նաղարովի.
ԿԱԶԱՆ, Վօսկրէսենսկայա փողոց, Բաբկինայի տանը.
ԿԱՄԵՆԵՑ-ՊՕԴՕԼՍԿ. Առևտրական հրապարակ, քաղաքային վարչութեան տունը.
ԿԻՇԻՆԵՎ. Գոստինայա և Գուբէրնսկայա փողոցի մէջ անկիւն. տուն Շվարցի.
ԿՕՎՆԱ. Պետերբուրգեան փողոց, տ. Պոխարկովի.
ԿՈՒՐՍԿ. Մոսկովսկայա փողոց, տ. Գլադկովայի.
ԼՕԴԶԻ. Պետրովսկայա փողոց, տուն Կոնչտադտի, № 783.
ՄԻՆՍԿ. Գուբէրնատորսկայա փողոցի և Սօբորնայա հրապարակի անկիւն, տուն Պոլիակի.
ՄՕԳԻԼԵՎ (Նախ.). Բոլշայա Սադովայա և Պոչտովայա փողոցների անկիւն, տուն Լեվինի.
ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴ, Մեծ Պետրովկա, տուն Մակէեվի.
« Նիժնի բազար, տ. Բլեսնովի.
ՆԻԿՈԼԱԵՎ. Սօբորնայա փողոց, տ. Միրոնենկո.
ՕԴԷՍԱ. Դէրիբասովսկայա փողոց, տ. Զէրէպենիկովայի.
ՕՐԵՈԼ. Բոլխովսկայա փողոց, տուն Զօրինայի.
ՊԵՆԶԱ. Մոսկովսկայա փողոց, տուն Շիչկօի.
ՊՍԿՕՎ. Սերգիեվսկայա փողոց, տուն Գերասիմովի.
ՐԻԳԱ. Իզվէստկովայա փողոց, տուն № 6.
ՐԻԱԶԱՆ, Պոչտովայա փողոց, տուն Շուլգինի.
ՐՕՍՏՕՎ (Դոնի վրա). Մեծ Սադովայա, տուն Մօրդովցովի.
ՌԻԲԻՆՍԿ. Կրեստովայա փողոց, տուն Զիմինի.
ՐԵՎԵԼ. Գլինիանայա փողոց, տուն Դեմինի.
ՍԱՄԱՐԱ. Դվորեանսկայա փողոց, տուն Շիրաեվայի.
ՍԱՐԱՏՕՎ. Նիկոլաեվսկայա փողոց, տուն բողքականների եկեղեցական ընկերութեան.
ՍԵՎԱՍՏՕՊՕԼ, Նախնմովսկի պրոսպէկտ, տ. Մաղուրովի.
ՍԻՄՖԵՐՈՊՕԼ. Պոլիցեյսկայա փողոց, տուն Պապէ.
ՍՄՈԼԵՆՍԿ. Բլագովէշչենսկայա փողոց, տուն Պավլովի.
ՏՎԵՐ. Միլլիոննայա փողոց, տ. Սվէտոգորովի.
ԹԻՖԼԻՍ, Գոլովինսկի պրոսպէկտ, տուն Մերիմանովի.
ՏԱՄԲՕՎ. Նոսովսկայա փողոց, տուն Գրիգորևվայի.
ՏՈՒԼԱ, Կիեվսկայա և Բեզիմենայա փողոցների անկիւն, տուն Շչերբաչեվայի.
ԽԱՐԿՕՎ. Պետրովսկայա փող., սեփական տուն.
ԵԱՐՕՍԼԱՎԼ. Գոստինիչ դվոր, առաջին կորպուս, №№ 11 և 12.

Վարչութեան և սեփական խանութների հեռագրական հասցէն է՝ „Попов“

ՊՐԷՑՍ-ԿՈՒՐԱՆՏ

Սև թէյ . . . . . № 0, ֆունտը 4 ր. — կ.
» » . . . . . № 1, » 3 » — »
» » . . . . . № 2, » 2 » 80 »
» » . . . . . № 3, » 2 » 60 »
» » . . . . . № 4, » 2 » 30 »
Ութերորդ մասը . . . . . 18 կօպէկ՝ փաթեթին
» » . . . . . 25 » »
» » . . . . . 30 » »

Սև թէյ . . . . . № 5, ֆունտը 2 ր. 10 կ.
» » . . . . . № 6, » 1 » 90 »
» » . . . . . № 7, » 1 » 70 »
» » . . . . . № 8, » 1 » 50 »
» » . . . . . № 9, » 1 » 40 »
փաթեթ 3 մսխալանոց . . . . . 5 »
» 3 » . . . . . 10 »

Ընկերութեան թէյերը ծախվում են մաս մաս՝ ֆունտ, կէս ֆունտ, քառորդ ֆունտ, ութերորդ ֆունտ, գլխաւոր պահեստում, Մոսկվա, Աղէքսէեվսկի փողոց, Աղէքսէեվսկի վանքի մօտ, սեփական տան, որտեղ և կպցնվում են կառավարչական բանդերօլները, որոնց բացակայութիւնը ապացոյց է, թէ փաթեթը կեղծ է, որի վրա խնդրում ենք մեր թէյը գործածողներին ուշք դարձնել։

ՎԱՃԱՌՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.

Թէյը պօստով ուղարկելը Եւրոպական Ռուսաստանում՝ ընկերութեան սեփական խանութները իրանց հաշվին են վերցնում և ոչինչ գիջումն չէ մնում։ Տրանսպորտով ուղարկելիս, երբ պակաս չէ 50 ֆունտից կամ 100 ռուբլու արժէքից, անվում է 14% գիջումն. իսկ ուղարկելու միւս բոլոր ծախսերը՝ դրվում է գնողի վրա։ Երբ թէյ են ուղում ստանալ «նալօժնայա պլատեժով», պէտք է ուղարկել իրրև գրաւական՝ ոչ պակաս քան ամբողջ պատուէրի արժէքի 15%-ը (Թէյը ուղարկվում է բացառապէս «Մոսկվայի Օբշչեստվօի» և «Նաղէժդա» ընկերութիւնների միջոցով). իսկ տրանսպորտային գրասենեակների և երկաթուղիների գործակալների ստացականները, իրրև ապացոյց, որ ապրանքի նալօժնի պլատեժը վճարած է, պէտք է անյապաղ ուղարկվեն այն խանութը, որտեղից ուղարկված է ապրանքը։

(№ 27) 1—5

Дозволено цензурою, Тифлисъ, 6 Марта 1892 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.